ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒՄ

---------- --- 2022 թվականի N ------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Ժամանակավոր անաշխատունակության և մայրությանանպաստների մասին» Հայասատանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Որոշման N 2 հավելվածի 3-րդ կետում «բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի» բառերը փոխարինել «անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ ՖԳՀ)», «հաշմանդամության խումբ» բառերը՝ «հաշմանդամություն» բառերով, իսկ «(խումբը վերանայելու)» բառը հանել.
- Որոշման N 4 հավելվածում «ԲՍՓ» բառերը փոխարինել «ՖԳՀ» բառերով.
- Որոշման N 5 հավելվածի 18-րդ կետում «բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի» բառերը փոխարինել «անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի», «հաշմանդամության խմբի սահմանումը կամ հաշմանդամության խմբի վերանայումը» բառերը՝ «հաշմանդամության» բառերով.
- Որոշման N 5 հավելվածի 18.1.-ին կետում «հաշմանդամության խմբի» բառերը փոխարինել «հաշմանդամության կարգավիճակի» բառերով.
- Որոշման N 5 հավելվածի 19-րդ, 20-րդ, 21-րդ, 45-րդ, N 6 հավելվածի 5-րդ և 6-րդ կետերում «բժշկասոցիալական փորձաքննության» բառերը փոխարինել «ֆունկցիոնալության գնահատման» բառերով.

- Որոշման N 5 հավելվածի 20-րդ կետում «բժշկասոցիալական փորձաքննությունն» բառերը փոխարինել «ֆունկցիոնալության գնահատումն» բառերով.
- Որոշման ամբողջ տեքստում «հաշմանդամ երեխայի» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող երեխայի» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից։